

<https://doi.org/10.59982/18294359-25.1-nm-18>

Նարինե Գագիկի Մանուկյան

բ.գ.թ., դոցենտ

ԵՊՀ, Անգլերենի թիվ 2 ամբիոն

ՀԵՀ, Կիրառական լեզվաբանության ամբիոն

manukyannarine@ysu.am

Ամփոփագիր

Սույն հետազոտությունը նվիրված է լեզվաբանության մեջ «երկխոսություն» հասկացության սահմանումների և մոտեցումների դիտարկմանն ու քննարկմանը: Աշխատանքն ունի տեսական-հետազոտական բնույթ: Բազմաշերտ վերլուծությունների միջոցով փորձ է կատարվում վերհանել տարբեր ընկալումներ և պատկերացումներ երկխոսության կառուցման, նպատակների, ենթատեքստի, կանխամտածված և ոչ կանխամտածված իմաստների վերաբերյալ:

Երկխոսության հարցական-հարցական, հարցական-հաստատական, հաստատական-հաստատական կառույցներն ամփոփում են խոսքի արտակա և ներակա իմաստները, հետևաբար՝ խոսքարտաբերման նպատակներն ու դրանցով պայմանավորված կառուցվածքային առանձնահատկությունները՝ կրկնություններ, անտեղի մեկնաբանություններ, հոմանիշների գործածում, խոսքի վերաշարադրում, ծիծաղ, դիմախաղ և այլն: Այսօրինակ լեզվական և արտալեզվական միջոցների նպատակային գործածման միջոցով խոսողը բացահայտում կամ քողարկում է խոսքի իրական իմաստն ու ենթատեքստը:

Աշխատանքում բազմաթիվ տեսական սահմանումների քննությամբ վեր են հանվում այն իմաստագործառական առանձնահատկությունները, որոնք դրվել են կամ կարող են դրվել հետագա ուսումնասիրությունների հիմքում:

Որպես փաստական հետազոտական նյութ, ականավոր լեզվաբանների սահմանումներին զուգահեռ, ներկայացվում են նաև ԵՊՀ և ՀԵՀ տարբեր մասնագիտացման ուսանողների կողմից «երկխոսություն» հասկացության ընկալման և սահմանումների ամփոփված վիճակագրական տվյալները: Հետազոտական նյութի քննությունը թույլ է տալիս նշել, որ հույզերի տարբեր դրսևորումները՝ ուրախություն, տխրություն, բարկություն, ատելություն, համակրանք, հակակրանք, ամոթ և այլն, առանցքային դեր են կատարում երիտասարդ սերնդի խոսքի կառուցման առանձնահատկությունների շարքում՝ ձևավորելով չքողարկված վերաբերմունք և ավելի քիչ ենթատեքստ պարունակող խոսք:

Հիմնաբառեր: Ենթատեքստ, ներակայված իմաստ, խոսքային մտադրություն, պլանավորած հաղորդագրություն, երկխոսություն, խոսքարտաբերման առանձնահատկություններ:

Ներածություն

Երկխոսությունը մարդկային պահանջմունքների և ցանկությունների խոսքայնացման միջոցներից է, որը հնարավորություն է տալիս հասարակության յուրաքանչյուր անդամի արտահայտվելու՝ խոսքաշարային հերթակայությամբ կառուցելով թեմատիկ բանակցային հարցական ասույթ-հարցական ասույթ, հարցական ասույթ-հաստատական ասույթ, հաստատական ասույթ-հաստատական ասույթ հաղորդակցական համակարգ: Կազմության հիմքում ունենալով մասնակիցների առկայություն՝ այն, հաջորդական խոսքարտաբերման նախապայմանով, համարվում է դիսկուրսի անբաժանելի բաղադրիչը և խոսքային փոխներգործության հիմնական տարրը՝ իր ուրույն տեղը զբաղեցնելով գործաբանական լեզվաբանության քննության համակարգում:

Աշխատանքի գիտական նորույթ է հանդիսանում լեզվաբանության մեջ «երկխոսություն» եզրույթի տարածամանակյա սահմանումների մեկտեղումն ու մեկնաբանությունը՝ վերջիններս զուգադրելով շուրջ 200 ոչ լեզվաբան ուսանողների կողմից արված սահմանումների և վերլուծությունների հետ: Համեմատություններ են տարվել նաև տարբեր սերունդների կողմից երկխոսություն կառուցելու նպատակների, միջոցների, խոսքի պլանավորման մեթոդների միջև:

Երկխոսություն՝ *դիալոգ* բառը ծագել է հունարեն «dialogos» բառից, որը կազմված է «dia»՝ միջոցով (through), միջև (among, between) և «logos»՝ բառ (word) արմատներից: Թեև հայերենում «երկխոսություն» համարժեք բառը կազմված է «երկու» և «խոսք» արմատներից, «dia» մասնիկը չի նշանակում երկու, քանի որ երկխոսությունը կարող է լինել բազմաթիվ անձանց միջև, իսկ «logos» բառն այստեղ գործածվում է ավելի լայն իմաստով և նշանակում է խոսք, միտք: Այս հիմնավորումով լեզվաբան Դ.Բոհմը «dialogos» բառը թարգմանաբար ներկայացնում է *խոսքի միջոցով* (through a word) [Bohm, 6-7]: Միայն բառիմաստն արդեն իսկ վկայում է, որ երկխոսությունն իրենից ենթադրում է ոչ միայն ասված խոսք, այլ խոսքի միջոցով ավելին հայտնելու, փոխանցելու, ճշտելու կամ բացահայտելու միջոց: Հետևաբար, երկխոսության իրական իմաստները հարկավոր է դիտարկել ինչպես տեսանելի՝ արտակա, այնպես էլ ոչ տեսանելի՝ ներակա մակարդակներում՝ անմիջական իմաստային կապ հաստատելով երկխոսության արտակա կառույցի և ենթադրելի ներիմաստների միջև:

Հարկ է նշել, որ ցանկացած լեզվօգտագործում (language usage, language in use), այդ թվում նաև երկխոսությունը, գիտակցված կամ պլանավորված խոսքարտաբերման համակարգ է, որտեղ առանցքային իմաստների նրբերանգները պայմանավորված են գիտակցության գերակայությամբ: Այսինքն, թեև խոսքը հիմնականում ծնվում է որևէ ցանկության, պահանջի կամ անհրաժեշտության գիտակցման արդյունքում,

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

բանականության շնորհիվ խոսքարտաբերման հիմքում ընկած առանցքային իմաստը կարող է բացահայտորեն արտահայտվել կամ սկզբունքորեն ներակայվել խոսքում՝ նրան հաղորդելով կանխամտածված և ոչ կանխամտածված ներիմաստներ:

Առաջնորդվելով խոսքի իմաստավորման վերոնշյալ սկզբունքով՝ մի խումբ լեզվաբաններ երկխոսությունը դիտում են որպես խոսքափոխանակման գործընթացում մտքերի գիտակցված արտահայտման ամբողջական համակարգ» [Laszlo], [Ochs], [Ponzio], [Vroom], այսինքն՝ ենթադրվում է, որ խոսքն արտաբերողը միանգամայն տեղյակ է խոսքում ասված և արտահայտված յուրաքանչյուր իմաստի մասին: Հետևաբար, կարելի է սահմանել, որ «ցանկացած խոսքարտահայտում միանգամայն կառավարելի և գիտակցաբար պլանավորվող գործունեություն է» [Պարոնյան, 6]:

Որոշ լեզվաբաններ երկխոսությունը դիտում են որպես զգայական հաղորդակցման տեսակ, որն արտահայտվում է ինքնաբերաբար, հույզերի ազդեցության ներքո՝ անհատական բնավորությամբ կամ զգացմունքայնությամբ պայմանավորված և առաջանում է զգացմունքների հոգեբանական ադապտացման արդյունքում [Arndt & Janney, [Caffi & Janny], իսկ Է.Վայգնդը երկխոսության մեջ զգացմունքների արտահայտումը համարում է հաղորդակցական նպատակ, նրա անբաժան մասը [Weigand, 40]: Հետևաբար, կարելի է ասել, որ երկխոսության մեջ զգացմունքները կարող են արտահայտվել ինքնաբերաբար՝ ոչ կանխամտածված, կամ ունենան դիտավորության նկատառումներ՝ համարվելով կանխամտածված [Danes, 48]: Այսինքն, մեր խոսքում կարող են բովանդակվել և՛ այն զգացմունքները, որոնք մեզանից անկախ են արտահայտվում, և՛ այնպիսիք, որոնք մեր ցանկությամբ են տեսանելի կամ ընկալելի դառնում՝ խոսքին հաղորդելով կանխամտածված ներիմաստներ:

Ուսումնասիրելով խոսքում զգացմունքների գիտակցված կամ ինքնաբերաբար արտահայտման միտումները՝ Է. Օքսը զգացմունքների ազդեցությամբ արտաբերված խոսքը համարում է չպլանավորված և արտաբերվելուց առաջ մտքում չվերամշակված խոսք, ավելացնելով, որ երկխոսությունը մեծամասամբ գտնվում է պլանավորածի և չպլանավորածի «կենտրոնում» [Ochs, 55]: Այս դիտարկմամբ նա հիմնավորում է հանպատրաստից արված խոսքում առկա կրկնությունները, ոչ ճշգրիտ շարահյուսական դասավորվածությունը, զեղչումը, անավարտությունը, երկիմաստությունը, ոչ տեղին արտահայտությունները և այլն: Չպլանավորած և իրավիճակի թելադրանքով ընթացք ստացող երկխոսության մեջ խոսքն արտաբերողը կենտրոնանում է միայն խոսքաստեղծման նպատակի վրա, իսկ ներակա իմաստները նրա կողմից շատ հաճախ չեն էլ նկատվում:

Անդրադառնալով երկխոսության պլանավորմանը, արտակա և ներակա իմաստներին՝ կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ իրական իմաստներն անմիջականորեն բխում են թեմայից և ընկալվում են թեմայի շրջանակում, քանի որ թեման այն «նյութն» է, որի շուրջ ծավալվում է զրույցը: Բացի այդ, բառերը համատեքստում նոր և փոխաբերական իմաստներ են ձեռք բերում, հետևաբար, թեմայի

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

շրջանակներում է խոսքն իմաստ ստանում, և հենց թեմայի շրջանակներում էլ փորձ է արվում զարգացնել երկխոսությունը և վերականգնել ներակայված իմաստները:

Այսպիսով, երկխոսության դիտարկումը գիտակցական և զգայական մակարդակում թույլ տվեց գալ այն եզրահանգման, որ անկախ այն հանգամանքից, թե երկխոսության իրական իմաստներն արտահայտվում են ասված բառերի շրջանակներում, թե ներակայվում՝ քողարկված զգացմունքները թողնելով կռահման, երկխոսությունը սկիզբ է առնում որևէ բան պարզելու, ճշտելու կամ բացահայտելու համար: Այն զուտ տեղեկատվություն հաղորդելու համար չէ, այլապես յուրաքանչյուր ասված խոսք կդիտվեր որպես մենախոսություն: Հետևաբար, որքան էլ հույզերն ու զգացմունքներն ազդեն խոսքի կառուցման վրա, որքան էլ պահի ազդեցությամբ առաջացած նոր տպավորությունները փոխեն երկխոսության ընթացքն ու բնույթը, երկխոսությունն իր էությամբ պլանավորված է, քանի որ ընդհանուր առմամբ այն խոսքային նպատակ է հետապնդում և սկիզբ է առնում այդ նպատակի՝ արտակա կամ ներակա կառույցներում իրականացման համար:

Ամփոփելով նշենք, որ ի տարբերություն մենախոսության՝ երկխոսությունը միայն մասամբ կարելի է պլանավորել: Կարևոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ երկխոսության մեջ կարելի է պլանավորել մասնակիցների յուրաքանչյուր հաջորդ արտաբերվող խոսքը, սակայն ոչ երկխոսության ընթացքը: Խոսքն արտաբերողը խորհում է թեմայի շրջանակներում, հստակեցնում իր մոտեցումը խնդրին, սակայն երկխոսության զարգացման ընթացքը պայմանավորված է նաև մյուս մասնակիցների դիրքորոշումներով: Ուստի խոսակիցը, հիմնվելով ընդհանուր իրավիճակի վրա և ընկալելով թե՛ արտակա, թե՛ ներակա իմաստները, հասկանում է իրավիճակային պահանջները և ըստ այդմ կառուցում հաջորդիվ ասվող խոսքը: Այս պատճառով է, որ երբեմն խոսքն ամբողջությամբ արտաբերվում է պլանավորման համաձայն, որոշ դեպքերում էլ՝ հաղորդակցման ընթացքում իրավիճակն է թելադրում երկխոսության զարգացման ընթացքն ու թեման, ինչի արդյունքում էլ ստեղծվում է երկխոսությունը:

Աշխատանքում նպատակ ունենալով զուգահեռներ անցկացնել տարբեր սերունդների՝ երկխոսության սահմանումների և նպատակների վերաբերյալ պատկերացումների միջև՝ հետազոտական-վերլուծական գրավոր հարցում անցկացվեց ԵՊՀ և ՀԵՀ շուրջ 200 ուսանողների հետ: Հարցաթերթը ներառում էր երեք հարց, որոնց ընդհանուր առմամբ տրվել են հետևյալ պատասխանները՝

1. Ի՞նչ է երկխոսությունը: Ի՞նչ նպատակ է հետապնդում:

- 1) Հարաբերությունները պարզելու միջոց (62%):
- 2) Հասարակության հետ հաղորդակցվելու միջոց (20%):
- 3) Խոսակցի նպատակները/մտքերը հասկանալու միջոց (15%):
- 4) Սեփական շահի համար բանակցություն (3%):

2. Ի՞նչպես է կառուցվում երկխոսությունը:

- 1) Ինչպես նախապես պլանավորել էր երկխոսություն սկսողը (55%):

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

2) Յուրաքանչյուր հաջորդ խոսք պայմանավորված է խոսակցի նախորդ խոսքով (45%):

3. Ո՞րքանով են պլանավորվում արտակա կառույցներն ու ներակա իմաստները:

1) Պլանավորվում է արտակա կառույցը առանց ներիմաստի, ասում ենք, ինչ մտածում ենք, զգացմունքները և հույզերը չեն խանգարում, երբեմն ամբողջությամբ բացակայում են (75%):

2) Որոշ մտքեր չենք բարձրաձայնում՝ քաղաքավարության կամ հարաբերությունները չփչացնելու համար, որոշ չափով խանգարում են զգացմունքները, հույզեր գրեթե չկան (20%):

3) Երկխոսության ընթացքում չենք կարողանում առաջնորդվել անձնական շահով, զգացմունքներն ու հույզերը խանգարում են արտահայտվել, խնդրել, պահանջել (5%):

Եզրակացություն

Ամփոփելով հարցման արդյունքները՝ կարող ենք նշել, որ ավագ և կրտսեր սերունդների պատկերացումները խոսքարտաբերման գործընթացի և երկխոսության կառուցման հարցում որոշակիորեն տարբեր են: Երիտասարդներն ավելի հակված են սեփական կարծիքն առանց կաշկանդվելու, բաց տեքստով արտահայտելու: Մեծամասնությունը կողմ է քաղաքավարի, առերես, առանց ենթատեքստերի և ակնարկների պարզաբանական բնույթ կրող հաղորդակցություններին: Ըստ հետազոտական նյութի արդյունքների՝ բացասական հույզերից գերակշռում են զայրույթն ու անհամբերությունը, դրական հատկանիշներ են համարվում վճռականությունը, եսասիրությունը, անկեղծությունը, սեփական անձն ու շահը պաշտպանելու կարողությունը:

Աշխատանքում կատարված ուսումնասիրության արդյունքները հնարավորություն են ընձեռում նորովի գնահատել լեզվական միավորների բազմաբովանդակ կիրառման հնարավորությունները, կշռադատել յուրաքանչյուր խոսքի իմաստային «իրական արժեքը», ինչպես նաև ի հայտ են բերում մարդու՝ որպես լեզվական մտածողությամբ օժտված բանական էակի տրամաբանական և զգայական հնարավորությունները խոսքը կառուցելիս: Պատահական չէ, որ ի սկզբանե յուրաքանչյուր անհատ հասարակության մեջ ինտեգրվելու համար մասամբ մասնակցելով «լեզվի ստեղծմանը»՝ անմասն չի մնում նաև խոսքի զարգացման և կատարելագործման գործընթացից:

Գրականության ցանկ

1. Պարոնյան Շ. «Լեզվաճանաչողություն և դիսկուրս», Երևան, ԵՊՀ հրատ., 2011.
2. Arndt H., Janney R.W. “Verbal, Prosodic and Kinesic Emotive Contrasts in Speech” // Journal of Pragmatics, 15(6). USA: Elsevier, 1991. – pp. 521-549.
3. Bohm D. “On Dialogue”. (ed. Nichol L.) New York: Routledge, 1996.
4. Caffi C., Janney R.W. “Toward a Pragmatics of Emotive Communication” // Journal of Pragmatics, 22 (3/4). London: Elsevier, 1994. – Pp. 325-373.

5. Danes F. "Feedback Dynamics between Written and Spoken" // Cmejrkova S., Danes F., Havlova E. (eds.) Writing vs. Speaking: Language, Text, Discourse, Communication. Germany: Tübingen, 1994. – Pp. 47-54.
6. Laszlo E. "Philosophy in the Soviet Union: A Survey of the Mid-sixties". The Netherlands: D. Reidel Publishing, 1967.
7. Ochs E. "Developmental Pragmatics". USA: Academic Press, 1979.
8. Ponzio A. "Signs, Dialogue and Ideology". USA: John Benjamins Publishing, 1993.
9. Vroom H.M. "No Other Gods: Christian Belief in Dialogue with Buddhism, Hinduism, and Islam". Michigan: William. B. Eerdmans Publishing, 1996.
10. Weigand E. "Concepts of Dialogue: Considered from the Perspective of Different Disciplines". Germany: Niemeyer, 1994.

DIALOGUE AS A TARGETED COMMUNICATIVE UNIT

Narine Manukyan

PhD, Associate Professor

YSU, English Chair 2

EUA, Chair of Languages

manukyannarine@ysu.am

Abstract

This study is the observation and deliberation on definitions and approaches to the concept of "dialogue" in linguistics. The paper has a theoretical nature. Through multilayered analyses, an attempt is made to reveal different perceptions and approaches to the construction of dialogue, its purposes, subtext as well as the intentional and unintentional meanings the dialogue can convey.

The interrogative-interrogative, interrogative-affirmative and affirmative-affirmative structures of dialogue encompass both explicit and implicit meanings of speech. Consequently, they reflect the objectives of the speaker and accordingly the structural characteristics of speech production such as repetitions, irrelevant comments, the use of synonyms, speech reformulation, laughter, facial expressions, etc. Intentionally implementing such linguistic and extralinguistic means, a speaker can either reveal or conceal the real meaning and subtext of speech.

Through the examination of numerous theoretical definitions, the study identifies the semantical-pragmatical characteristics that have been or can be used as a basis for further research.

Besides the definitions of prominent linguists on "dialogue", the study also presents totalized statistical data on how students of different specializations from YSU and EUA perceive and define the concept of "dialogue". The analysis of the research material indicates that various expressions of emotions such as joy, sadness, anger, hatred, sympathy, aversion, shame, etc., play a central role in shaping the speech characteristics of the younger generation, resulting in more explicit conduct, attitudes and speech with less subtext.

Keywords: *Subtext, implied meaning, communicative intention, intended message, dialogue, characteristics of speech.*

Ներկայացվել է՝ 01.04.2025թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 22.04.2025թ.